

## ՍՈՎՈՐՈՒԹԻՒՆ

Սիամի բազատրին տոռած մեկ ունկնդրութիւնը :

**ԱԾԲ ՅՈՎՀԱՆՆԵՍ ՊՈՊԵՐԻՆԿ**, որ 1855 տարւոյն Խնդղիոյ տէրութեան կողմանէ Սիամի թագաւորին պատուիրակ խրկուեցաւ՝ վաճառականութեան դաշինք մը հաստատելու համար, ասանկ կը պատմէ իր հոն թագաւորէն ունեցած ունկնդրութիւնն ու ընդունելութիւնը.

“ Խնկնդրութեան սրահն որ մոտանք, բոլոր ազնուականները հոն ժողվուեր էին, և ծունկ չոքած գլուխնին գետին կոթնցուցած կը կենային : Դապ ՚ի մէջտեղը առաջ գացի, ուր ինծի համար բարձ մը պատրաստեր էին ամենէն բարձր աստիճանի մարդկանց կարգին մէջ . Ճախ կողմս՝ անմիջապէս ինձի մօտ էին առաջին պաշտօնեայն և իր եղբայրը . Ա երջապէս թագաւորը ներս մոտաւ և եկաւ նատեցաւ փառաւոր զարդարուած գահու մը վրայ, որ զրեթէ տասը ոտք բարձր էր . արքայն ոսկի դիպակէ շքեղ հագուստ մը հագած էր . իր թագը քովը դրուած էր, բայց ինքը գլխարկ մը ունէր գլուխը, որուն վրայ խոշոր ադամանդներ կը փայլէին, և մատերն ալ ադամանդեայ մատնիներ անցուցած էր : Ճախ կողմս՝ արքունական գահուն մօտ կը կենային թագաւորին եղբայրներն և որդիքը, իսկ աջ կողմս՝ արքունական իշխանազուններն և բարձրագոյն կարգի ազնուականները : Խնչապէս որ ըսի, ամէնքն ալ ծունկ չոքած էին . թագաւորին եկած միջոցը՝ աւելի խորին երկրպագութիւն ըրին՝ շատ անգամ ճականնին գետին զարնելով . ես ալ յարգանօք ծուեցայ : Խնորդելի երաժշտութիւն մը կը լսուեր . ետքը նըշան մը տրուեցաւ և լսութիւնը տիրեց . ան ատեն ես խօսակցութիւն մը կարդացի թագաւորին, որուն մէջ յետ չնորհակալ ըլլալու գտած մարդասիրական ընդունելութեանս և իմ պաշտօնս

կատարելու համար հարկաւոր եղած դիւրութիւնները գտնելուս համար, կ'աւելցընէի յայտնելիմ վստահութիւն՝ թէ այդ դաշանց պայմանները իր անուան մեծ համբաւը անշուշտ աւելի պիտի տարածէին արևելքի բոլոր ազգաց մէջ, երկու դաշնագիր պիտութեանց բարեբաստութիւնը պիտի աւելցընէին, միանգամայն բոլոր աշխարհիս ալ օգուտ պիտի բերէին : Խորը թագաւորը զիս ներկայացուց իր մեծ եղբօրը, իր որդւոյն և իսել մը արքունական իշխանազանց, որոնց իւրաքանչիւրը անուննին տրուելու ատենը բարեկու տային ինծի : Խնչապէս բեհեայ թեթև զգեստներ հագած էին, որոնք ուկեայ ծաղիկներով լազղնեգործած էին : Խակ աւելի ստորին կարգի ազնուականները սրահին ծայրը կը կենային, և ինչուան կէս մէջքերնին մերկ էին . և բոլոր հանդիսականաց սրունքներն և ոտքերը մերկ էր : Գահուն երկու կողմը՝ քիչ մը հեռուկեկ իսել մը սպասաւորներ կային : Արահին կամարակալներուն վրայ կախուած էին Խնդղիոյ և Ռորդուգալի թագուհեաց, և Արկնային Այսերութեան Դասոքուանկ կայսեր դէմքերը, 1851 տարւոյն անգղիական համաշխարհական արուեստահանդիսին տեսարանացը բազմաթիւ վիմագրութիւններ, ազգային զրօններու հաւաքում մը՝ զոր Ա ամբոայինկարիչ մը նկարեր էր, և քանի մը ուրիշ անձանց դէմքեր ալ՝ զորոնք չկրցայ Ճանչնալ : Խնդունելութիւնը զրեթէ կէս ժամ մը տեեց, և երբոր թագաւորը գնաց, ոսկեհուն վարագոյր մը քաշեցին ու արքունական գահը ծածկուեցաւ : Խն ատեն ազնուականներն ոտքի վրայ ելան . անոնք որ կը ճանչնայինք՝ եկան զմեզ բարեկելու, և երաժշտութիւնը նորէն սկսաւ լսուիլ, որուն մէջ թմբուկներուն աղաղակը տիրեր էր : Խմաց տրուեցաւ ինծի որ թագաւորը կ'ուզէր զիս առանձին տեսնալ . գաւթէ մը անցայ, և վանդակի մը ետև գտայ զթագաւորը . առջես գորդ մը դրած էին գետինը : Ամագաւորը իմ խօսա-

կցութեանս օրինակը բարձր ձայնով կարդաց , խել մը քաղաքավարական խօսքեր զուրցելով ինծի այս նիւթիս վրայօք . ըսաւ որ իմկարդացած միջոց՝ ամէն իմաստները աղէկ չէր հասկըցած , և թէ հիմա իւրաքանչիւր բառին իմաստը աղէկ թափանցեր էր , ու հաճ և հաւան էր կարդացածին : Հետոյ հաշեցաւ հարցընելու թէ կուզեմ արդեօք Աիամի թագաւորութեան բերքերէն մէկքանին հետո տանիլ Այրոպա , և ըսաւ թէ ծանուցանեմ իրեն անոնց անունները և մէկէն կը խրկէ ինծի :

„ Վանի մը տունկեր ուզեցի ես . ինքը հրամայեց որ անոնցմէ զատ երկու գեռահասակ փղեր ալ տան ինծի , թէ որ կրնամ զանոնք հետո տանիլ նէ : Այսպէս հոչակաւոր ձերմակ փղին վիմագրութիւնը տուաւ ինծի : Ա երջը իր ամենէն պզտի զաւակը բերին , որ ութը ամսուան աղջիկ մըն էր . հարցուց թագաւորն ինծի թէ արդեօք գեղեցիկ կ'երեւայ իմ աշքիս առջև . և իրաւցընէ շատ աղուոր էր : Հարցուցի թագաւորին թէ քանի զաւակ ունէր .

— “ Տասնըմէկ հատ՝ թագաւոր ըլլալէս վերջը , և արքունական գահը ելլելէս առաջ՝ տասուերկու հատ ունէի ,, , պատասխանեց : Արդարե հետաքրքրական տեսարան մըն էր իր ծիծաղերես որորելն աղջիկը , այնպիսի բացարձակ և ինքնիշխան թագաւորի մը , որուն առջև բոլոր առաջին կարդի ազնուականաց գետնի վրայ իյնախ ու երկրապագութիւն ընելը քիչ մը առաջ տեսեր էի ,, :

Աիամի թագաւորութիւն երկու թագաւորօք կը կառավարուի , որոնց առջինին իշխանութիւնը քիչ մը աւելի մեծ է . երկրորդ թագաւորը՝ մասնաւորապէս զինուորական գործոց վրայ ինսամք կը տանի , և մէկալին պէս կը մեծարուի յարդանօք , և նոյն պատուոյ նշանները կը կրէ : — Բատ ասելոյ սըր Պիուրինկի , Աիամի թագաւորութեան արդի երկու թագաւորներն ալ մտացի , կը թեալ և յառաջադիմութեան շատ

ջանասէր անձինք են : Անաւանդ երկրորդ թագաւորը մտքի ձրից կողմանէ նշանաւոր է . աղէկ գիտէ մաղեմաթիքական գիտութիւնները , և Աւկլիդէսի ու Այլդընի գրուածոցը կատարելապէս հմտւէ : Անգղիացի պատուիրակը իրեն ալ այցելութեան գնաց , և ասանկ կը պատմէ զան . “ Արիկուան ” երկրորդ թագաւորէն առանձին ունկընդըութիւն մը ունեցայ . խիստ հասկըցող և սիրելի մարդ է , և կ'ըսուի թէ խոհեմութեան ու քաղաքագիտութեղիտմամբ է՝ և ոչ ուրիշ պատճառաւ , որ հասարակաց իրաց մէջ քիչ կը մըտնայ : Իր սենեակներն ընտիր ախորժակով կարգաւորուած են , և թէ որ քանի մը երկրին զարդերէն ցտնուէին հօն և կահկարասիքը բարձր ըլլային , պիտի կարծէի թէ անգղիացի ազնուականի մը բնակարանն եմ : Խիստ աղէկ անգղիարէն խօսեցաւ հետո , և հետաքրքրական ու ախորժելի էր իր խօսակցութիւնը : Անգղիական ամենէն յարգի գրոց գրատուն մը ունի , Ճոխ հաւաքում մը մեքենական այլ և այլ գործեաց , և հիմակուան ատենի ամէն տեսակ զէնքերու : Այրեկոյեան ակումբին միջոցը միշտ երաժշտութիւն կար , և մասնաւորապէս շատ զարմացայ գործիքի մը փափուկ քաղցրութեանը վրայ , որ տասնըեօթը պամատի եղէգէ ձեւացած էր , որոնց գլխաւորը 7 ոտքէ պակաս չէր : Ուագաւորը այս գործիքով երկայն ատեն զուարձանալին ետքը , առաւ ինծի ընծայ ըրաւ ,, :

Հետաքրքրութեան համար զնենք հոս այս երկու թագաւորաց անունները , որոնք բաւականապէս երկայն են : Արաջին թագաւորը կը կոչուի ‘ Ֆրա-Պարտ-Սօմբէլ-Ֆրա-Բարմէնոր-Մակա-Մծնէտո-Ֆրա-Շամ-Քլա-Ելու-Հու- . իսկ երկրորդ թագաւորը՝ Փրա-Պարտ-Սօմբէլ-Ֆրա-Բարմէնոր-Մակա-Մակալարէլ-Ֆրա-Բին-Քլա-Շա-Ելու-Հու- : Շատ զանազանութիւն մը չկայ այս երկու անուանց մէջ , և համեմատութեամբ ընտրելի կ'երեան թէ որ քաղցատուին նախընթաց առաջին թա-

գաւորին բազմավանկ անուան հետ,  
որ էր . Ըսնը լուսաբարձրութեան էքիմու-  
հուլութեանոր : Այս անունէն վերջը՝  
թող տանք որ ընթերցողը շունչ առնէ :

## ՎԻՊԱՍԱՆՈՒԹԻՒՆ

### Մագդաղինէ :

( Ըսրունակութիւն . Տես Երես 56 )

Գ

Ուստի իրիկուն մ' ալ որ այս երկու  
ծերունի ընկերակիցները իրարու քով  
նստած իրենց հին օրերուն վրայ կը խօ-  
սակցէին , զորոնք մէկտեղ սահեցուցեր  
էին , յանկարծ տեսան որ պարտիզին  
ծառազարդ մէկ ճամբէն դուրս ելան  
այն երկու պատանիները՝ զորոնք մենք  
վանդակապատ դրանն առջև թողու-  
ցինք : Կեռահասակ օրիորդը գաւթին  
աստիճաններէն կամաց կամաց վեր ե-  
լաւ , ծանր կերպով մը և սիրտը ելած :  
Վարդիզուհին և ասպետը ոտքի վրայ  
ելան զինքը ընդունելու համար . ինքը  
ան ատեն ծոցէն նամակ մը հանեց . զոր  
նախ և առաջ շրթանցը մօտեցըներով  
համբուրեց , ետքը Ա աղջրավէրի ձեռ-  
քը տուաւ , որն որ հետաքրքիր բարե-  
սրտութեամբ մը կը նայէր այս օրիոր-  
դին վրայ , զոր առաջին անգամ կը տես-  
նար : Դյեր ասպետը կնիքը քակեց ու  
կարդաց նամակը : Վ զջիկը ոտքի վրայ  
կեցած՝ իր նիշար թեւերը կուրծքին  
վրայ գրեր և աչուըները գետին սևե-  
ռեր էր . հանդարտ էր իր տիրութեա-  
նը մէջ , և խեղճութիւնը իր վեհու-  
թիւնը չէր վերուցած վրայէն : Տը  
վիրէզնը մարդիկուհին հետաքննութե-  
մը կը կշռէր զինքն աչքերովը . իսկ ե-  
րիտասարդը քանի մը քայլ հեռու կե-  
ցած՝ ականատես կ'ըլլար այս անձայն  
տեսարանին :

Մոնագոյ . 13 յուլիս 18 . . :

“ Այս աշխարհէս ելլելու մօտեցած ,  
և դիմաց յաւիտենականութիւնը տե-  
սած միջոցը՝ որ քիչ ատենէն պիտի սկսի  
ինծի համար , աչուըներս դէպ 'ի Վաղ-  
ղիա կը դարձնեմ քանի որ չեն փա-  
կուած . առ քեզ կ'աղաղակեմ , ուլ եղ-  
բայր իմ , և աղաչաւոր բազուկներս առ  
քեզ կը բարձրացընեմ , յանուն այն կը-  
նո՞յ որ իմ քոյրս էր և քու ընտրած ա-  
մուսինդ : Վէաղ , ինչե՛ր քաշեց , ինչ  
դառն պատահարներ , այս տունն՝ որ  
դուն այնպիսի բարեթաստութեան մէջ  
տեսար երբեմն : Վէր են հիմա այս ըն-  
տանեաց ուրախութիւնն , որուն համը  
դու ալ առիր : Վերեզմանը բոլոր իմ  
մերձաւորներս յափշտակեց ինծմէ : Խմ  
էրիկս չկրցաւ իր ձախորդութեան վրայ  
ապրիլ , և ես թշուառս ալ ահաւասիկ  
ես իսկ կը մեռնիմ : Ալ մեռնիմ ես , և  
մայր եմ . կրկին մահ է ասիկայ , ով  
Տէր : Այս տողերը կարդացած ժամա-  
նակդ , որ մի միակ գանձն է և մի միակ  
ժառանգութիւնն է՝ զոր կրցայ ձգել  
աղջկանս , ինքը աշխարհիս վրայ ուրիշ  
մէկը չունի՝ բաց 'ի քեզմէ . այս ար-  
ցունքներովս թրջած թուղթը ձեւքդ  
բոնած միջոցը , իմ զաւակս քու դիմացդ  
պիտի ըլլայ , միայնակ , հեռու տեղէ  
եկած , խոնջ 'ի ցաւոց և յաշխատութե-  
նէ , առանց ուրիշ ապաստանի՝ բաց 'ի  
քու յարկէդ , առանց ուրիշ ապաւինի՝  
բաց 'ի քու սրտէդ : Վհ , այն քաղցը  
կապին համար ըլլայ՝ որ քեզի սիրելի  
եղաւ և զոր անշուշտ մահը ըքակեց ,  
այն Վերմանիոյ համար ըլլայ՝ որ քեզի  
հիւրափիրութիւն ըրաւ և երկար ժա-  
մանակ հայրենիք եղաւ քեզի , իմ գեր-  
դաստանիս համար ըլլայ՝ որ քու գեր-  
դաստանդ եղաւ , այն նաղելի անձին  
համար ըլլայ՝ զոր շատ շուտ կողոստեց  
քեզմէ մահը և որ կ'երդմնեցուցանէ  
զքեզ իմ բերնէս , ո՞չ , մի մերժեր իմ  
սիրուն անօգնական աղջիկս : Ինդունէ ,  
տաքցուր քու զրկիդ մէջ աղաւնի մը որ  
իր բոյնէն ինկեր է : Եւ դու , զոր թէ-